ՀԱՂՈՐԴԱԳԻՐ

Հայաստանում ԵՄ Թվինինգ ծրագիր վիճակագրության ոլորտում (II փուլ)

N° 3

Եռամսյակային հաղորդագիր՝ հրապարակված ԵՄ կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – 2-րդ փուլ» Թվինինգ ծրագրի ԹՄԽ գրասենյակի կողմից

Սա ԵՄ *«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – 2-րդ փուլ»* Թվինինգ ծրագրի երրորդ հաղորդագիրն է:

Ծրագրի 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացվել են հետևյալ գործողությունները.

Աղքատության վիճակագրություն
Ուսուցողական այց դեպի Իտալիա
Քառօրյա ուսուցողական այցի շրջանակն ընդգրկում էր հետևյալ թեմաները. աղքատության չափումն Իտալիայում, ցուցանիշներ տնային տնտեսությունների բյուջետային հետազոտությունից, բացարձակ աղքատության չափումը, աղքատությունը և սոցիալական բացառումներն Իտալիայում ըստ եվրոպական ցուցանիշների, մեթոդաբանական հարցեր, սոցիալական բացառումները և նյութական զրկվածությունը որպես նոր մարտահրավեր Եվրոպայի համար: Ուսուցողական այցի ընթացքում ներկայացվեցին Հայաստանում սոցիալական բացառման հետազոտության տվյալների վրա հիմնված ելքային աղյուսակներ:

Վիճակագրության տարածում
Համագործակցություն տվյալներ արտադրողների հետ. ՀՀ բնապահպանության նախարարության հետ տվյալների փոխանակման վերաբերյալ համաձայնագրի նախագիծն այժմ փորձնական փուլում է: Համաձայնագիրը միտված է ծառայել որպես տվյալների փոխանակման ընդհանուր մոդել ՀՀ ԱՎԾ և այլ պետական մարմինների միջև: Համագործակցություն տվյալներ սպառողների հետ. կազմակերպվեց երկու հանդիպում սպառողների խմբերի հետ՝ նպատակ ունենալով մշակել հանդիպումների ստանդարտ ձևաչափ ՀՀ ԱՎԾ և տարբեր սպառողների խմբերի միջև դրական երկխոսությունն առավել ընդլայնելու համար:

Ժողովրդագրական վիճակագրություն (Կենսական)
Ուշադրության կենտրոնում տվյալների որակի և հասանելիության վերաբերյալ թեմաներն էին: ԵՄ փորձագետներն անդրադարձան առկա մեթոդաբանություններին, քննարկվեցին բացակա տվյալների իմպուտացիայի և ուղղման մեթոդները: Իրականացվեցին հանդիպումներ ՀՀ առողջապահության նախարարության և Արմավիր մարզի ՀՀ ԱՎԾ տարածքային գրասենյակի հետ: Առաջարկվեց սկսել արշավ՝ բարձրացնելու իրազեկությունը վարչական համակարգերում բարձրորակ գրանցումների կարևորության վերաբերյալ, քանի որ դրանք ծառայելու են որպես հիմնական տեղեկատվության աղբյուր ՀՀ ԱՎԾ համար:

Ժողովրդագրական վիճակագրություն (Միգրացիա)
Ներկայացվեցին առաջարկություններ բարելավելու միգրացիայի վիճակագրության մեթոդաբանությունն ըստ ԵՄ ստանդարտների: Քննարկումների հիմնական մասը վերաբերում էր ցուցանիշների արտադրման նպատակով վարչական աղբյուրների հավանական օգտագործմանը, որը պահանջում է բարելավված ներքին և արտաքին համագործակցություն:

Աշխատանքային իրավիճակներ ծրագրի 3-րդ եռամսյակի ընթացքում

Ինովացիայի վիճակագրություն
Մշակվել է մասնավոր ոլորտի ինովացիայի վերաբերյալ հարցաթերթ, և Հայաստանի 1700 փոքր և միջին մասնավոր ձեռնարկություններում այժմ իրականացվում է փորձնական հետազոտություն: Փորձնական հետազոտության արդյունքները վերլուծվելու են առաջիկա առաքելության շրջանակներում այս տարի և հիմք են հանդիսանալու պարբերական ինովացիայի հետազոտության մշակման համար: Հետազոտությունը համապատասխանեցվելու է ԵՄ ստանդարտներին և մեթոդաբանություններին:

Ծրագրի առաջընթացի հետ մեկտեղ համապատասխան փաստաթղթերը և նյութերը բեռնվում են ծրագրի կայք-էջում անգլերեն և հայերեն: Ծրագիրը նաև ունի ֆեյսբուքյան էջ, որը կանոնավոր կերպով թարմացվում է: Հղումները ներկայացված են ստորև:

Ծրագրի չորրորդ եռամսյակում նախատեսվում է 2 ծրագրային առաքելություն Հայաստանում, ուսուցողական այց դեպի Ֆինլանդիա ինովացիայի վիճակագրություն թեմայով և Դանիա՝ տեղեկատվության տարածում և վիճակագրության որակ թեմայով:

Թվինինգ ծրագրի հիմնական թեմաները

1. Վիճակագրության տարածում և որակ
Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ, մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն, սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և հրապարակված հարցաթերթ, որակի կառավարման ապահովման վերաբերյալ ներկայացված առաջարկություններ

2. Ժողովրդագրական վիճակագրություն
Բարելավված կենսական և միգրացիոն վիճակագրություն, տվյալների հավաքագրման բարելավված մեխանիզմների ռազմավարություն (թղթային աղբյուրներից անցում վարչական ռեգիստրների)

3. Աշխատաշուկայի վիճակագրություն
Հաշվարկված և հրապարակված աշխատանքի գին, աշխատանքի գնի ինդեքս, ինչպես նաև վաստակի վերաբերյալ հաշվարկված և հրապարակված կառուցվածքային վիճակագրություն

4. Աղքատության վիճակագրություն
Սոցիալական բացառումների վիճակագրության ներդրում և հաշվարկում
(ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցությամբ)

5. Նորարարական վիճակագրություն
Ներդրված նորարարական վիճակագրություն, նորարարական վիճակագրության մշակված մեթոդաբանություն, կանոնավոր արտադրման և հրապարակման պլան

6. Ջրի հաշիվներ
Առանցքային շահառուների հետ ջրի հաշիվների մշակված մեթոդաբանություն, ջրի կազմված հաշիվներ

Լրացուցիչ տեղեկությունների համար՝
Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն (ԹՄԽ)
pah@dst.dk

Հեռ.՝ + 374(0)99077916
Կայք-էջ՝ www.dst.dk/armenia2015
Ֆեյսբուքյան էջ՝ www.facebook.com/EU-Armenia-Twinning-Project-on-Statistics-II-801732856606449

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է Դանիայի վիճակագրության կողմից՝ Ֆինլանդիայի, Իտալիայի, Լիտվայի վիճակագրությունների հետ համատեղ:

«Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած տեսակետները հանդիսանում են Դանիայի վիճակագրության պատասխանատվությունը և կարող են չարտացոլել Եվրոպական միության տեսակետը»: